

Անանիա Շիրակացի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



eMatenadaran.

Անանիա Շիրակացի
Պատմություն

«Aegitas»

Շիրակացի Ա.

Պատմութիւն / Ա. Շիրակացի — «Aegitas»,

Մեծ է Անանիա Շիրակացու գիտական գործունեության ոլորտը: Ջբաղվել է փիլիսոփայությամբ, աստղագիտությամբ, աշխարհագրությամբ, մաթեմատիկայով, տոմարագիտությամբ, արքիմիկոսությամբ: Իր աշխատության մեջ հեղինակ ներկայացնում է մինչ իր դարաշրջանը հայ ժողովրդի պատմությունը՝ հղումներ անելով տարբեր աղբյուրներից:

Содержание

| | |
|-----------------------------------|----|
| [1] | 5 |
| [2] | 7 |
| Конец ознакомительного фрагмента. | 13 |

Անանիա Շիրակացի Պատմություն

[1]

Մովսէսի Խորենացոյ եւ Անդրեասի: Աղամ նախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն՝ ծնանի զՄէք: Եւ եկեաց ամս եւթն հարեր, մինչեւ ի հարեր երեսուն եւ հինգ ամս Մաղաղայեղի: Մէք կեցեալ ամս երկերիւր եւ հինգ՝ ծնանի զԵնովս. եւ եկեաց ամս ՉԷ, մինչեւ ի քսան ամս Ենովքայ: Սորա երկուքն յարձանագրութեանցն՝ ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսէպոս, թեպէտ եւ ուրն անյայտ է:

Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած: Եւ ընդէ՞ր արդեւք այս, եւ կամ վասն որո՞յ պատճառանաց նախն է ասացեալ կոչելոյն զԱստուած, կամ ո՞րպէս կոչելն իմանի: Քանզի Աղամ ճշմարտութեամբ աստուածաստեղծն. եւ սա ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր. այդ եւ յանցուցեալ եւ ի թաքստեան եղեալ, զՈ՛ր եսն յԱստուծոյ՝ եւ ոչ յայդ ումեքէ հարցանի: Մապէս եւ զվճիռ վարկին ի նմին բերանոյ լսէ. իսկ յետոյ եւ Աբէղ մերձաւոր եւ ծանաթ Աստուծոյ լիալ՝ պատարագս մատուցանէ, եւ ընկալեալ լինի:

Արդ՝ սոցա այսպէս ընդունելութեան եւ ծանաթութեան Աստուծոյ լինել, է՞ր աղագաւ առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս յուսով: Այդ զայդսն վասն սորա ի տեսութեանց՝ ի հրաւիրեալսն մեր յողարկեցուք տեղի. իսկ որ առձեռնպատրաստն է, ասացուր: Քանզի ի պատուիրանագանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ՝ ի դրախտէն եւ յԱստուծոյ՝ չարութեան աղագաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ: Չկնի եւ ընտանեզոյնն Աստուծոյ՝ յորդոցն Աղամայ՝ ի հարագատէն իւրմէ սպանանի յեղբարէ: Յետ որոյ՝ ոչ բանի ինչ աստուածայնոյ, եւ ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսանս եւ յանյուսութեան ազգ մարդկան համարեալ լինի. այդ եւ ինքնահաճոյ արդարեւ գործս. յորոց միջի սա քաջայոյս եղեալ՝ ուղղութեամբ հանդերձ՝ կոչէ զԱստուած: Իսկ կոչելոյ կրկնակի իմանի. կամ անուանել որպէս գնոռացեալ, կամ յաւգնականութիւն կարդալ:

Արդ՝ անուանել որպէս գնոռացեալ՝ ոչ է ի դէպ. զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն նոցա զԱստուածոյ ածեր անունն, եւ կամ գնոյն իւրն որոյ անունն. եւ ոչ դարձեալ մահու եւ թողման դեռ եւս յԱստուծոյ ստեղծեալսն հասեալ է: Ապա ուրեմն յաւգնականութիւն կոչէ սա զԱստուած:

Ժա կեցեալ ամս ՃԳ, ծնանի զԿայիան: Եւ եկեաց ամս ՉԺԵ, մինչեւ ի ԺԳ ամս Մաթուսաղայի:

Կայիան կեցեալ ամս ՃԶ, ծնանի զՄաղաղայեղ. եւ եկեաց ամս ՉԽ, մինչեւ ՁԱ ամս Ղամեքայ:

Մաղաղայեղ կոցեալ ամս ՃԿԵ, ծնանի զՅարեղ. եւ եկեաց ամս ՉԼ, մինչեւ ԽԸ, ամս Նոյի:

Յարեղ կեցեալ ամս ՃԿԲ, ծնանի զԵնովք. եւ եկեաց ամս Պ, մինչեւ ՄՁ ամս Նոյի:

Ենովք կեցեալ ամս ՃԿԵ, ծնանի զՄաթուսաղայ: Եւ եկեաց ամս Մ մինչեւ ԼԳ ամս Ղամեքայ: Եւ հաճոյ եղեալ Աստուծոյ փոխի: Մա յետ ծնանելոյ զՄաթուսաղայ ամաց Մ՝ արժանի եւ հաճոյ վարս ստացեալ, որպէս գիտէ որ հաճեցան, փոխեալ ի միջոյ ամպարշտաց, զորոյ զպատճառսն յետոյ հատուցուր: Մաթուսաղայ կեցեալ ամս ՃԿԷ, ծնանի զՂամեք. եւ եկեաց ամս ՊԲ, մինչեւ Ռ ամս Նոյի. եւ անդէն իսկ առ ջրհեղեղան վախճանեցաւ:

Ղամեք կեցեալ ամս ՃՁԸ, ծնաւ որդի եւ անուանեաց զանուն նորայ Նոյ: Եւ եկեաց ամս ՇԼԷ, մինչեւ ի ՇԳԵ ամս Նոյի. եւ մեռաւ չորիւր ամաւր յառաջ քան զՄաթուսաղայ հայր իւր:

Վասն Նոյի: Եւ ընդէ՞ր արդեւք զսա միայն որդւոյն անուամբ յորջորջեաց, իսկ վասն այդոցն անենեցուն պարզաբար ասաց՝ թէ ծնան. գորմէ ընդդէմ ինն մարգարեանայ հայրն: Մա, ասէ, հանգուցէ գմեզ ի գործոց եւ ի տրտմութենէ ձեռաց եւ յերկրէ՝ գոր անէծ տէր

Աստուած. որ եղև ոչ հանգիստ, այդ ջնջումն՝ որ ինչ միանգամ ի վերայ երկրի: Ինձ թուի, հանգուցանելն՝ դադարեցուցանել. իսկ դադարեցուցանելն՝ գամպարշտութիւնս եւ գշարիս՝ սատակմամբ մարդկան երկրագործաց դարուն երկրորդի: Քանզի գեղեցկաբար ասաց, թե ի գործոց մերոց, որ է յանարեւութեանց. եւ ի տրտմութենէ ձեռաց՝ որովք կատարենք զպղծութիւնս: Բայց այդարեւ հանգչին ըստ այսմ մարգարէութեան ոչ ամենեքեան, այդ կատարեալքն յառաքինութեան ոգիք. յորժամ չարիք՝ իբրեւ հեղեղաւ ջնջեալք մաքրին, իբր առ Նոյի մոլեալքն ի չարիս: Իսկ որդւոյդ անուամբ՝ մեծարեաց գնա Գիր, իբրեւ զյայտնի եւ գնշանատր, եւ զարժանի ժառանգ հայրենականացն ժառանգութեան:

Անդրեասի: Նոյ եղեալ ամաց հինգ հարեր՝ ծնաւ երիս որդիս՝ զՍէմ, զՔամ, եւ զՅաբեթ. եւ յետ հարեր ամի ծննդեանն Սեմայ՝ եկն ջրհեղեղն յամի վեցհարերորդի կենացն Նոյի, եւ կալաւ զերկիր ամ մի: Եւ առնին յԱդամայ մինչեւ ի ջրհեղեղն ազգք տասն, ամք ՍԽԲ:

Եւ եկեաց Նոյ յետ ջրհեղեղին ամս ՅԾ, մինչեւ Զ ամն Եբերայ: Եւ այս են ծնունդք Սէմայ: Սէմ էր ամաց ՃԲ, ծնաւ զԱրփաքսադ յերկրորդում ամին յետ ջրհեղեղին. եւ եկեաց ամս Ը, մինչեւ ի Ճ եւ ի Ա ամն Փաղոկայ:

Արփաքսադ եղեալ ամաց ՃԼԷ՝ ծնանի զԿայինան. եւ եկեաց Կայինան ամս ՅԼ, մինչեւ Սաղայ: Սաղայ եղեալ ամաց ՃԼ, ծնաւ զԵբեր. եւ եկեաց ամս ՆԶ, մինչեւ յեթներորդ ամն Սերուբայ:

Եբեր եղեալ ամաց ՃԼԴ, ծնաւ զՓաղեգ. եւ եկեաց առ նովաւ ամս ՆԼԳ, մինչեւ ԼԸ ամն Նարովրայ: Առ սովաւ ասի լինել բաժանումն լեզուացն, վասն զի եւ Փաղեգ՝ ըստ եբրայեցոց բարբառոյն՝ բաժանումն կոչի: Եւ առնին ի ջրհեղեղէն մինչեւ զՓաղեգ ազգք հինգ, ամք ՇԻԵ: Եւ յԱդամայ՝ ազգք հնգետասան, ամք ՍՉԿԷ:

Բաժինք երկրի յերից որդւոցն Նոյի, յետ ջրհեղեղին, Սէմայ, Քամայ, եւ Յափեթի, եւ բաժինք ազգաց նոցա: Եւ առնին սահմանք նոցա, Սէմայ անդրանկանն Նոյի՝ ի Պարսից եւ ի Բակտրիոնէ մինչեւ ի Հնդիկս. եւ ձգին մինչեւ յԵփեսոս: Եւ Քամայ երկրորդի որդւոյն՝ յԵփեսոսէ կորուստայ մինչեւ ի Գադիրովն, կողմն հարաւոյ: Եւ Յափեթի՝ երրորդի որդւոյն՝ ի Մարաց մինչեւ ի Գադիրովն, կողմն հիւսիսային: Եւ է Յափեթի՝ գետն Դկղաթ, որ մեկնէ ընդ Մարս եւ ընդ Բաբելովն: Եւ Սէմայ՝ գետն Արածանի: Եւ Քամայ՝ գետն Գեհովն, որ կոչի Նիդոս: Եւ որ խառնակեցան լեզունք յետ ջրհեղեղին՝ եին երթանասուն եւ երկու: Եւ որ զաշտարակն շինեին՝ այն ազգք եւ նոր լեզուաւքն ընդ ամենայն երկիր սփռեցան: Եւ Նեբրովդ սկայ՝ որդի Բուշայ եթիովպացի՝ որսայր նոցա երէ առ ի կերակուր բաւականի:

[2]

Որդիք Յափեթի, երրորդի որդույն Նոյի, Գոմեր. եւ ի նմանէ Գամիրք: Մագովդ՝ եւ ի նմանէ Կեղտք եւ Գաղատացիք. եւ Մադայ՝ եւ ի նմանէ Մարք: Յաւան՝ եւ ի նմանէ Յոյնք եւ շեղղէնք. Թոբէլ՝ եւ ի նմանէ Թետաղք. Մոսոք՝ եւ ի նմանէ եւ զորիկացիք. Թիրաս՝ եւ ի նմանէ Թրակացիք: Քիտիւմ՝ եւ ի նմանէ Մակեդովնացիք: Եւ որդիք Թիրասայ՝ Ասքանաս, եւ ի նմանէ Սարմատք. Երիփաթ՝ եւ ի նմանէ Սարոմատք. եւ Թորգոմ՝ եւ ի նմանէ շայք: Եւ որդիք Յաւանայ՝ Եղիսա. եւ ի նմանէ Սիկեղացիք եւ Աթենացիք: Թարշիշ՝ եւ ի նմանէ Վիրք եւ Տիրենացիք. Կիտիս՝ ուստի շոռոմք, եւ Ղատենացիք, եւ Ռոդացիք: Ընդ ամենայն ազգք շնգետասան:

Եւ ի սոցանէ ելին մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են Կիւպրացիք՝ ի Կիտիացոց, որդիք Յաբեթի: Բայց դարձեալ գտանենք եւյայնոցիկ՝ որ են ի կողմանս հիւսիսոյ, որ ազգակից են Կիտիացոցն: Եւ ազգքն որ են ի շեղաս աշխարհի՝ յայնցանէ են, որք յետոյն փոխեցան անդր, որպէս Սաւետացիքն, որ բնակեցան յԱթենս քաղաքի պատուականացն Յունաց, եւ Թիբեացիք: Սիդովնացիք ելին եւ պանդխտեցան, որ են ի Կադեմայ որդոյ Ագէնովրայ. եւ Կարքեղովնացիք, որ են եկք ի Տիրոսէ. եւ եթե այդք եւս իցեն, որ սոյնպէս յետոյ փոխեցան. եւ Եղադաս: Բայց ուսանիմք զճշմարտութիւն սոցայ յարիմաց եւ ի մարգարեից: Արդ՝ ելին, ի Յափեթէ, ի խառնակել լեզուացն, ազգք հնգետասան. եւ ունին ազգքս այսոքիկ, որ ելին ի Յափեթէ, ի Մարաց մինչեւ ի Սպերիոն, որ ձգին մինչեւ յՈվկիանոս. եւ հային ընդ հիւսիսի:

Մարք, Ադուանք, Լփինք, Աղանք, Անագոնք, Ճիդքք, Մասքութք, շայք, Վիրք, Եգերացիք, Խաղտիք, Գամիրք, Պափղագոնացիք, Մարիանդենացիք, Բիբարենացիք, Քաղիւկացիք, Մոսիւնիկացիք, Կողքացիք, Մեղանք, Ղենացիք, Սարմատք, Սարոմատք, Մեովտացիք, Սկիւթացիք, Տարացիք, Թրակացիք, Բաստանացիք, Իդիւրիկացիք, Մակեդովնացիք, Յոյնք, Ղիբացիք, Իստրացիք, շոնք, Դանացիք, Յապիւգացիք, Կաղաբրացիք, Ովնիկացիք, Ղատենացիք, որ են շոռոմք, Տիրենացիք, Գաղիանոսք, Կեղտք, Ղիգիստիանոսք, Կեղտիբերք, Գաղիացիք, Ակիտանացիք, Իդիւրիանոսք, Բաստանք, Կիրտանացիք, Ղիւսիտանացիք, Վակիացիք, Կիւնացիք, Բրիտանիկեցիք, որ ի կղզիսն բնակեալ են:

Եւ այս ազգք են՝ որ գիտեն ի սոցանէ դպրութիւն: Իբերացիք, Ղատինացիք՝ որով շոռոմքն վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, շայք: Եւ են սահմանք սոցա ի Մարաց՝ ընդ կողմն հիւսիսոյ մինչեւ ի Գաղիքովն: Եւ ձգին ի Պատասմիդով գետոյ մինչեւ ի Մատուսիա, որ է Իդիովն: Եւ այս են ազգք եւ երկիրք նոցա:

Ատրպատական, Ադուանք, Անագոնիա, շայք Մեծք եւ Փոքունք, Կապադոկիա, Պափղագոնիա, Գաղատիա, Կողքիս, շնդիկք, Բոսպորիա, Մեովտիս, Դեոիս, Սարմատիս, Տարիմիս, Սարոմատէս, Սկիւթիա, Թրակէ, Մակեդովնիա, Դաղմատիա, Մովդիս, Թեսալիս, Ղոկրիս, Բեովտիա, Ետողիա, Ատտիկէ, Աքայիա, Պեղենիս, որ կոչի Պողէպոնէսիոս, Ակաթնէա, շէպիրոտիս, Իդիւրիս, Ղիքիմիտիս, Ադրիակէ, յորմէ ծովն Անդրիական. Գաղիա, Ղիսիտանիա, Իտաղիա, Թուսկենէ, Մասաղիա, Կեղտիս, Գաղիա, Սպանոգաղիա, Իբերիա, Սպանիա Մեծ: Աստ սպառին սահմանքն Յաբեթի՝ մինչեւ ի կղզիսն Բրիտանիկեցոց. եւ հային ամենեքին ընդ հիւսիսի: Եւ այս են կղզիք նոցա: Սիկեղիա, Բրէտանիա, Կիբիա, Ռոդոս, Քիոս, Ղեսքոս, Կիթերա, Չակիւնթոս, Կեփաղենիա, Իթակէ, Կորկիրիա, եւ Կիւղաղէս, եւ մասն մի յԱսիա՝ որ անուանեալ կոչի Յովանիա. եւ գետն Դկղաթ մեկնէ ի մէջ Մարաց եւ Բաբիլոնի: Այս են սահմանք Յափեթի:

Որդիք Քամայ՝ Քուշ. եւ ի նմանէ Եթիովպացիք. Մեստրայիմ՝ եւ ի նմանէ Եգիպտացիք: Փաղ եւ ի նմանէ Տրոգղացիք ծակամուտք, Քանան. եւ ի նմանէ Ափրիկացիք եւ Փիւնիկեցիք:

Որդիք Քուշայ՝ Սաբա, եւ Եփղաթ եւ Սաբեկաթա, եւ շոեգամայ, եւ Սաբաթայ: Եւ որդիք շոեգամայ՝ Սաբայ եւ Յուդադան: Եւ Քուշ ծնան զՆեբրովք: Եւ եգիպտացիք՝ հանդերձ Մեստրայիմաւ հարբն իրեանց, առնին ութ, քանգի սաէ, թե Մեստրայիմ ծնաւ զՂուդիիմ, եւ ի

նման է ծնան Ղիզացիք. եւ զՆիգիին. եւ ի նմանէ Պանփիղացիք. եւ զՂաբախն. եւ ի նմանէ Ղիբիացիք. եւ զՆեփաղիւն, եւ զՊատարոտնիւն. եւ ի նմանէ Կրետացիք. եւ զՔետոնիին՝ եւ ի նմանէ Ղիւկեացիք, յորմէ ելին Փղշտացիք եւ զԲանաթիթորիին. եւ ի նմանէ Դակեացիք, յորոց ելին Փիղիստիմացիք:

Ամենայն ազգք Քանանացոց՝ հանդերձ Քանանաւ հարբն իրեանց՝ երկոտասան. քանզի ասէ, թէ Քանան ծնաւ զՄիդովն զանդրանիկ իւր. եւ ի նմանէ Միդովնացիք. եւ զՔետացիս. եւ զՅերուսացիս. եւ զԱնովրիացիս. եւ զԳերգեսացիս. եւ զԽեւացիս. եւ զԱրուակացիս. եւ ի նոցանէ Տրիպոդիտք. եւ զԱսենացիս. եւ զԱրադիովն. ի նմանէ Արադացիք. եւ զԾամրիւն. ի նմանէ Որթոսեցիք. եւ զԱմաթի. եւ ի նմանէ Ամաթոսեցիք. ընդ ամենայն ազգք երեսուն եւ երկու. եւ է բնակութիւն նոցա յԴինիկորորայ մինչեւ ի Գադիբովն, որ է ընդ հարաւակողմն:

Եւ այս ազգք են՝ որ ծնանին ի նոցանէ:

Եթիովացիք, Տրոգդացիք ծակամուտք, Առեացիք, Սարակինոսք, Իսաբինացիք, ձկներք շեղենացիք, Եգիպտացիք, Փինիկացիք, Ղիբեացիք, Մարնարիդացիք, Կարացիք, Փիղիստացիք, Միւսացիք, Մոսոնիկեցիք, Փոհիզացիք, Միքոնացիք, Բիթիւնացիք արեւմտականք, Նոմոդացիք, Ղիւկիացիք, Մարիանդէնացիք, Պանփիղացիք, Մեսիզացիք, Պիսիդացիք, Աւգադիացիք, Կիդիկեցիք, Մարիացիք:

Եւ այս ազգք են որ ծնան ի նոցանէ:

Կրետացիք, Մագարացիք, Նամադացիք, Մակրոնացիք Նամասոնացիք. սոքա ունին յԵգիպտոսէ մինչեւ ցՈվկիանոս:

Եւ այս են կղզիք նոցա:

Եպիւկինիա, Իդակորսուդա, Ղիւպադուսա, Գաւոնոս, Մեդիտէ, Կերկինիա, Մէնիգա, Սարդոնիէ, Գաղատէ, Գորսիւնա, Կրետէ, Գաւրոս, Ղեգէ, Թերա, Կարէաթոս, Աստիպաղեա, Քիոս, Ղեսթոս, Տենէդոս, Իսթրոս, Իյարսոս, Սամոս, Կովաս, Կնիդոս, Նիսիրոս եւ Կիւպրոս մեծ կղզի:

Եւ որ գիտեն ի սոցանէ դայրութիւն՝ են այսոքիկ:

Փինիկեցիք, Եգիպտացիք, Պանփիղացիք, Փոհիզացիք. եւ են սահմանք Քամայ յԴինիկորորայ, որ մեկնէ զԱսորիս եւ զԵթովպիէ. եւ ձգին մինչեւ ի Գադիբովն:

Եւ այս են անուանք աշխարհաց նոցա:

Եգիպտոս, Եթովպէ, որ հայի ընդ շնդիկս. եւ միւ[ս] եւս Եթովպէ՝ յորմէ Քուշացոց գետն ելանէ. Երիփրա՝ որ է Կարմիր ծով, որ հայի ընդ արեւելս. Թեբայիս Ղիբիէ, որ ձգի մինչեւ ի Կորկիրենէս. Սամմարէս. Մինրտիս, յորում բնակեալ են ազգք քսան Անովնացոց. Մակասք. Տաւտամէացիք. Լիւբէ՝ որ ձգի ի Ղիւպիայ մինչեւ ի փոքր Միւրտէոս. Նոմիդիա. Մեսուրիս. Մարիտանիա, որ ձգի մինչեւ յարձանսն շերակղեայ, որ կայ դէմ յանդիման Գադիբովնի. եւ որ առ ծովեզերք գաւառսն ունի, որ են ի հիւսիսոյ՝ զԿիդիկիա, զՊանփիղիա, զՊիսիդիա, զՄիւսիա, զՂիզոնդնիա, զՓոհիզիա, զԿամագիա, զՂիւկիա, զԿարիա, զՂիդիա, զմիւս եւս զՄիւսիա, զՏցովադա, զՈվդիդա, զԲիթիւնիա, զառաջին Փոհիզիա:

Ունի եւ կղզիս զՍարդովինիա, զԿրէտէ, զԿիւպրոս. եւ զգետն Գեհովն, որ անուանեալ կոչի Նիդոս, որ մեկնէ ի մէջ Քամայ եւ Յաբեթի. սկիզբն Երկորեայց ծովուն, այսինքն է՝ ծով Արեւմտից կոչեցեալ: Այս են ազգք Քամայ:

Երէց որդին Նոյի՝ Մէմ. եւ ի Մէմայ են ազգք քսանեփինգ, որ բնակեցան յարեւելս. որդիք Մէմայ՝ Եղամ. եւ ի նմանէ Եղամացիք, Խուժիկք, Ասուր. եւ ի նմանէ Ասորեստանեայք. Արփաքսադ. եւ ի նմանէ Քադդէացիք. Ղուդ՝ եւ ի նմանէ Ղագովնացիք. Արամ՝ եւ ի նմանէ Ետացիք առաջինք: Չոսա կոտորեաց Աբրահամ: Եւ որդիք Արամայ՝ Ովս եւ Ուդ. եւ ի նմանէ Ղիդացիք եւ Գաթեր. ի նմանէ Գասփենացիք. եւ Մոսոք՝ եւ ի նմանէ Մասենացիք:

Եւ Արփաքսադ ծնաւ զՍաղա. Սաղա ծնաւ զԵբեր. ի նմանէ Եբրայեցիք. եւ Եբերեայ եղեն երկու որդիք. Փաղեդ՝ եւ ի նմանէ կարգի ազգն Աբրահամո: Եւ Յեկտան ծնաւ զԵդնովադադ, ի նմանէ շնդիկք: Սաղեփ. ի նմանէ Բակտրիանոսք. եւ զԱսրամովթ. ի նմանէ Արաբացիք. եւ զԵդովրամ, ի նմանէ Կամեդացիք. եւ զԱդովրա, ի նմանէ Արադացիք. զԷզեդ, ի նմանէ Արիանացիք. եւ զԴէկղամ, ի նմանէ Կէդրուսացիք. եւ զԳէբադ, ի նմանէ Սկիւթացիք. եւ

զԱբիմիեղ, ի նմանէ Վրկանիկը. եւ զՍաբաթ, ի նմանէ Արաբացիք առաջինք. եւ զՈվփիր, ի նմանէ Արամացիք. եւ զԵփղաթ, ի նմանէ Գիմնոս Սովիստեայք, որ կոչին մերկիմաստակը: Ամենքեան սոքա յերից որդուցն Նոյի ազգք եւթանասուն եւ երկու:

Եւ է բնակութիւն որդուցն Մէնայ ի Բակտրոնէ մինչեւ յԵփնոկորուրոյն, որ մեկնէ ընդ Ասորիս եւ ընդ Եգիպտոս եւ ընդ ծովն Կարմիր, ի բերանոյ ծովուն՝ որ է յանդիման Ասինեայ, այսինքն է՝ շնդկաց աշխարհին:

Եւ այս ազգք են, որ եղեն ի նոցանէ. Եբրայեցիք, որ են Հրեայք, Պարսք, Մարք, Պայկաստան, Արուայիկք, Ասորեստանեայք, Վրկանիկք, շնդիկք, Տապրիկք, Պարթեք, Գերմակացիք, Իդամացիք, Քուշանք, Արաբացիք առաջինք, Կեդարք, Սկիւթացիք, Արաբացիք, Գիմնոս Սովիստայք, որ կոչին Մերկիմաստք: Եւ ձգին բնակութիւնք սոցա մինչեւ յԵփնոկորուրոն եւ ի Կիդիկիա:

Եւ այս ազգք են ի սոցանէ, որ գիտեն դպրութիւն. Եբրայեցիք՝ որ են Հրեայք, Պարսք, Մարք, Քաղդէացիք, շնդիկք, Ասորեստանեայք: Եւ է երկայնութիւն բնակութեան որդուցն Մէնայ՝ ի շնդկաց մինչեւ յԵփնոկորուրոն. եւ յայնութիւն ի Պարսից եւ ի Բակտրոնէ մինչեւ ի շնդիկս:

Եւ այս են անուանք աշխարհաց նոցա. Պարսք՝ հանդերձ ազգաւքն որ շուրջ գնոքաւք են, Տապրիկք, Վրկանիկք, Բաբելոն, Կորդուք, Ասորեստան, Միջագետք, Արաբիա առաջին, Եղամ, շնդիկք, Արաբիա փառաւոր կողմն Ասորուց, Կոմագենէ. եւ Փիւնիկէ՝ որ է որդուցն Մէնայ: Եւ ընդ ամենայն ազգք երից որդուցն Նոյի եւթանասուն եւ երկու:

Եւ ազգք, որոց ընտրին միմեանց լեզուք, են այսոքիկ. Եբրայեցիք, Ասորեստանեայք, Քաղդէացիք, Պարսք, Մարք, Արաբացիք, Մադիանացիք, Ադիբենացիք, Տայիանոսք, Ադամոսանացիք, Տաճիկք, Մոդք, Կասքք, Ադուանք, շնդիկք, Քուշանք՝ որ են Եթիոպացիք, Եգիպտացիք, Ղիւբէացիք, Քետացիք, Քանանացիք, Փերեզացիք, Խեւացիք, Անովրիացիք, Գերզեսացիք, Յեբուսացիք, Եղովմայեցիք, Մամարացիք, Փիւնիկեցիք, Ասորիք, Կիդիկեցիք՝ որ են Տարասացիք, Գամիրք, Հայք, Եգերացիք, Վիրք, Սկիւթացիք, Կողքեցիք, Խաղտիք, Բոսպորացիք, Ասինացիք, Մարացիք, Ղիւկաովնացիք, Պիսիդացիք, Գաղատացիք, Պափղագովնացիք, Փոնիզացիք, Գուդացիք, Յոյնք՝ որ են Աբայեցիք, Թեսաղք, Մակեդովնացիք, Թրակացիք, Միսեցիք, Բեսիւացիք, Դարդանացիք, /?/ Մարմատացիք, Գերմանացիք, Պանոնացիք՝ որ են Պէովնացիք, Նովրիկեցիք, Դաղմատք, Հոռոմք՝ որ են Ղատինացիք, Ղիւզրացիք, Գաղիացիք՝ որ են Կեդուացիք, Ալիտանացիք, Բրիտանացիք, Սպանիացիք՝ որ են Տիրենացիք, Հոնք, Մարացիք, Բակուացիք, Դեղուտացիք, Մեդեկացիք, Ափրիացիք, Մագիկացիք, Գարնմանք՝ որ են Բերեդացիք, որ երկայնեալ ձգին մինչեւ յԵթիովպիէ:

Լաւ համարեցայ համառատիւ ցուցանել եւ վասն եկաց ազգաց՝ որ գնացին յիրաքանչիր բնակութենէ, եւ չոգան բանակեցան յաւտար տեղիս ուրեք ուրեք:

Եւ արդ սկսանինք յարեւելից. ի Պարսից եւ ի Մարաց չոգան բնակեցան ի Պարթեւս. եւ ազգքն, որ շուրջ գնոքաւք են՝ չոգան հասին մինչեւ ի կողմանս Ասորուց: Եկք Արաբացուց՝ Արաբացիք փառաւորք, քանզի այսպէս անուանեցաւ Արաբիա Փառաւոր: Եկք Քաղդէացուցն՝ Միջագետեայք: Եկք Մադիանացուցն՝ Կինեդոկոպիաք, Տրոգդացիք ձկնկերք: Եւ ազգս Յունաց, որ ունին անուանս հինգ՝ Յոնիդէս, Արկադէս, Բրիովտացիք, Եողացիք, Ղակոնացիք: Եւ եկք սոցուն են այսոքիկ. Պոնտացիք, Բիթանացիք, Սպանիացիք, Տրովացիք, Ասիանացիք, Կարացիք, Ղիւկիացիք, Պամփիդացիք, Կիրենացիք, եւ կղզիք բազումք, որ ունին զՄիտովնական համատարածն:

Եւ ի սոցանէ կղզիք մետասան շուրջ գծովուն՝ որ կոչի Հետոմիրատոս: Եւ են այսոքիկ. Անդրոս, Տէնոս, Տեովն, Նարքոս, /34/ Կեովս, Կիրոս, Դեղոս, Միւփոս, Ռենէ, Կիրոնոս, Մարաթոն: Եւ այդ եւս կղզիք մեծամեծք երկոտասան, յորս եւ քաղաքք բազում բնակեալ են, որ անուանեալ կոչին Սպորագէս, այսինքն՝ ցանք եւ ցիրք, յորս պանդխտութեամբ բնակեցան Յոյնք:

Եւ են այսոքիկ. Երբիա, Կրետէ, Սիկեդիա, Կիպրոս, Կովաս, Սամոս, Ռոդոս, Քիոս, Թասոս, Ղենոնս, Ղեսթոս, Սամովթրակէ: Եւ են ի Բիոտացոց՝ Երբիա, որպէս ի Յունացն՝ յունական քաղաքք վեշտասան:

Եւ են այսոքիկ. Կղաղոմիներ, Միտիոլիներ, Փովկէա, Պրիենէ, Երիթրէ, Սամոս, Սմեոս, Կողովոն, Քիոս, Եփեսոս, Սմիոնա, Պերինթոս, Բիզանտիս, Քաղկեդոն, Պոնտոս, եւ Ամիսոս, Եղեթերա:

Հոմայեցոց եւ Կիտիացոց ազգք եւ եկք են այսոքիկ. Թուսկք, Կիմեդէացիք, Պիլենացիք, Կամպանացիք, Ապոլէացիք, Կաղաբերացիք, Ղուկանացիք:

Ազգք եւ եկք Ափրիկացոց. Նեբղենացիք, Կինթացիք, Նումիդացիք, Նասամովնացիք: Եւ են կղզիք հինգ, յորս եւ քաղաքք Ե. Սարդոնիա, Կորսիկիա, Գիրբալ եւ Բենիսիա, Կերկինա, Գաղատէ:

Ազգ եւ եկք Մաւրացոց. Ղիսիանացիք, Մուսուղենացիք, Տինգիացիք, Կեսարանացիք:

Ազգք Սպանիացոց՝ որ են. Տիրենացիք, Դետարակոնեացիք, Ղիսիտանացիք, Բետիկացիք, Ատրիգոնացիք, Բասկոնացիք, Կաղիկեցիք՝ որ են Ասպորացիք:

Այս են ազգք եւ եկք Գաղիացոց՝ որ կոչին Արբուսացիք Ղ...տենացիք, Բաղինացիք, Սիկենացիք, Արինացիք:

Ազգք եւ եկք Գերմանացոց են այսոքիկ. Մարկեմոնացիք, Բերդինէլացիք, Կիդացիք, Բիրլենադացիք, Անոգիդացիք: Եւ ազգք եւ եկք Սարմատացոց՝ Ամաքսիսբացիք, Գրեկացիք՝ որ կոչին Գրեկոսարմատք:

Եւ գայս եւս լաւ համարեցայ յայտ առնել քեզ գանգէտ կողմանս ամենայն ազգաց, եւ զլերին անուանիս եւ զգետս զերեւելիս. որպէս զի եւ յայսցանէ մի՛ ինչ անտեղեակ գտանիցիս:

Եւ արդ սկսանիմ ասել զազգացն, եւ առնեմ սկիզբն յարեւելից: Արուայստան եւ Տաճկաստան անդր քան զԱրաբացիս են: Տաճիկքն բուն անդր քան զՏաճկաստան է: Եւ Աղուանք անդր են քան զԴրոնս Կասպից: Եւ Մեծն Մաղիա՝ ընդ որս մարտեան Մովսէս, է անդր քան զԿարմիր ծով. եւ Փոքր Մաղիամ մերձ առ նա՝ սահմանակիցք են Եգիպտոսի, որ թագաւորեացն Ռագուէղ աներ Մովսէսի: Եւ անդր քան զԳամիրս. յաջմէ կողմանէ Հայք, Եգերացիք, Վիրք, Կողքեցիք, Սկիւթացիք, Բոսպորացիք, Խաղտիք, Նասացիք՝ որ կոչին Սանիտացիք, որ ձգին մինչեւ ի Պոնտոս, որ էր բանակն Ափսարովսայ, եւ Սեբաստոպոլիս, եւ նաւահանգիստն հիւսիսոյ եւ Փասիս գետ: Եւ հասանեն ազգք այսոքիկ ի Տրապեզունտ:

Այս են անուանք տասն եւ երկու լերանցն անուանեաց. Լիբանան, Կաւկաս, Տաւրոս, Ատղաս, Պառնասոս, Կիթերոն, Եղիկոն, Պարթենիոս, Մասիք, Ղիւկաբանտոս, Պենիովս, Ողիմպոս:

Գետք մեծամեծք եւ անուանիք են քառասուն. Հինդոս՝ որ է Փիսովն. Նիդոս՝ որ է Գիհովն, Դկղաթ, Եփրատ՝ որ է Արածանի. Իովրդանան, Կէփ[իսոս], Տանայիս, Մէնոս, Եգիմանթոս, Հաղիս, Ատրպիս, Թերմոդոն, Երասիս, Կուր գետ, Բովրիսթենէս, Աղփիոս, Տաւրոս, Երոտոս, Մեանդրոս, Երմոս, Աքսիոս, Պիւրամոս, Բլոս, Եբրոն, Սանգարիս, Քեդոն, Պտէնոս, Եւէնոս, Եպարքիոս, Կահիւստոս, Սիմոիս, Սկամանդրոս, Ստիմոն, Պարթենիոս, Իստրոս, Ռէնոս, Բետէս, Բոդանոս, Երիգանոս, Թիբրիս՝ որ այժմ անուանեալ կոչի Տիբերիոս. ընդ ամենայն քառասուն:

Արդ՝ վասն զի յայտ եղեւ վասն ազգացն՝ յերից որդոցն Նոյի, որ ընդ ամենայն երկիր սփռեցան, թե ո՛վ յումէ ծնաւ: Մէմ՝ անդրանիկ՝ կալաւ զկողմն արեւելից: Քամ զկողմն հարաւոյ. Յաբեթ զկողմանս արեւմտից եւ հիւսիսոյ:

Պարտ եւ պատշաճ է այսուիւնեւ ընթանալ զհետ ամացն թոյց:

Փաղէզ եղեալ ամաց հարիւր եւ երեսուն՝ ծնաւ զՌագաւ:

Ռագաւ եղեալ ամաց հարեր երեսուն եւ երկուց՝ ծնաւ զՍերուք:

Սերուք եղեալ ամաց հարեր եւ երեսուն՝ ծնաւ զՆաքովր:

Նաքովր եղեալ ամաց հարեր եւ ինն՝ ծնաւ զԹարայ:

Թարայ եղեալ ամաց երանասնից՝ ծնաւ զԱբրահամ:

Աբրահամ էր ամաց եթանասուն եւ հնգից, ի ժամանակի իբրեւ հրաման ետ Աստուած՝ ելանել նմա ի տանէ հարց իւրոց եւ գալ յերկիրն Քանանացոց: Արդ՝ առնին ի բաժնացն երկրի մինչեւ ի գալ Աբրահամու յերկիրն Քանանացոց՝ ազգք հինգ, ամբ ՈՃՁ. եւ յԱդամայ՝ ազգք քսան, ամբ ՎՅՁԴ:

Բնակեաց Աբրահամ յերկիրն Քանանացոց ամս քսան եւ հինգ. եւ ապա ծնաւ գԻսահակ: Իսահակ եղեալ ամաց վաթսուն՝ ծնաւ գՅակոբ: Յակոբ եղեալ ամաց ութսուն եւ եթանց՝ ծնաւ գՂեի: Ղեի եղեալ ամաց քառասուն եւ վեցից՝ ծնաւ գԿահաթ: Կահաթ եղեալ ամաց վաթսնից՝ ծնաւ գԱմրամ: Ամրամ եղեալ ամաց եթանասուն՝ ծնաւ գԱհարովն. եւ յամին ութսներորդի երրորդի կենացն Ահարովնի ելին որդիքն Իսրայելի յերկրէն Եգիպտացոց՝ ի ձեռն Մովսէսի առաջնորդին իրեանց: Եւ առնին ամենայն ամբ բնակութեան որդոցն Իսրայելի յերկրին Եգիպտացոց՝ ամբ չորեքհարեր. եւ յանապատին՝ ամս քառասուն:

Յետու որդի Նաւեայ իբրեւ անց ընդ Յորդանան գետ, եկաց երկրին Քանանացոց ամս քսան եւ եթն. եւ ի պատերազմունսն՝ ամս վեց. յետ ժառանգեցուցանելոյ գերկիրն վիճակաւք՝ եկաց ամս քսան եւ մի: Արդ՝ առնին, յորմէ հետէ եկն Աբրահամ յերկիրն Քանանու, մինչեւ ի մեռանելն Յետուայ որդոյ Նաւեայ՝ ազգք եթն, ամբ ՇԱ. եւ յԱդամայ՝ ազգք քսան եւ եթն, ամբ ՎՊՁԴ:

Յետ մահուան Յետուայ մեղաւ ժողովորդն, եւ մատնեցան Քուսանայ արքային Միշագետաց. եւ ծառայեցին նմա ամս ութ. եւ իբրեւ աղաղակեցին առ Աստուած, յարոյց նոցա իշխան գԳոթոնիէզ՝ գեղբայր Քաղեբայ գկրտսեր, որ էր ի ցեղէ Յուդայ: Սա մարտեաւ ընդ Քուսանայ եւ սպան գնաւ. եւ տիրեաց ժողովրդեանն ամս քառասուն: Յաւորս Սամեղարայ՝ Պոմիդեւս եւ Պիմիթէս, Պիտոս, Ատղաս, Պանոպտէս, Դեկադիոն ճանաչին: Յետ վախճանելոյն Յետուայ կալան ծերքն Լ ամ:

Դարձեալ մեղուցեալ՝ մատնեցան Եգղովմայ արքայի Մովաբու եւ ծառայեցին նմա ամս ժԸ. եւ իբրեւ դարձան առ Աստուած, յարոյց նոցա իշխան գԱւովդ՝ յազգէ Եփրեմի, որ սպան գԵգղովն. եւ տիրեաց ժողովրդեան ամս ութսուն: Յետ մահուանն Աւովդայ մեղաւ ժողովորդն. եւ մատնեցան Յաբիսայ արքայի Քանանացոց՝ ամս քսան ծառայեալ նմա: Ի սորա աւորս մարգարեացաւ Դեբովրա կին Աղփիդովթայ՝ յազգէ Եփրեմի. եւ ի նորա ձեռն տիրեաց. գաւրու որդոցն Իսրայելի Բարակ՝ որդի Աբենեմայ, ի ցեղէ Նեփթաղէմայ: Սա մարտեաւ ընդ Միսարայի սպարապետին Յաբինայ, եւ յաղթեաց նմա, եւ տիրեաց որդոցն Իսրայելի. եւ դատեցաւ Դեբովրայ գժողովորդն ամս քառասուն: Յաւորս Դեբովրայ մարգարէուիոյ՝ որ ընդ Բարակայ, որք ի Դիոսէ վիպասանին, ուստի Պիպկոս անուանեալն Ջեւս, Կրոնայ ազգական, յարեմոտս թագաւորեաց. որ ունէր դստերս Երովպէմինոս, Անտիոպէ, Աղկմենէ, Սեղդենէ, Դանատվէ, Պերսեւս, Եղէդա՝ կին Ջեւայ: Ջեւս՝ կենդանութիւն կոչի, Եղէդա՝ աղ, վասն տորեւատ շնչոց:

Յետ մահուանն Դեբովրայ մեղաւ ժողովորդն եւ մատնեցան Մադիանացոց ամս եթն: Ի սոցա վերայ չոգաւ Գեղէովն երեքհարեր արամբ, եւ սատակեաց կորոյս ի նոցանէ բերս երկուտասան: Սա տիրեաց ժողովրդեանն զամս քառասուն, որ էր յազգէ Մանասէի: Յաւորս Գեղէովնի՝ Ջեթոս եւ Ամբիովն, որդիք Ջեւայ, երեւեին: Եւ սորին որդի Աբիմեղեք ամս երիս: Յաւորս Աբիմեղեքայ՝ որք ըստ Գաննեմիդեայն, եւ Պերսեայն, եւ որք ըստ Երակղեայն, եւ Արգոսին, եւ որք ըստ Ղիկուրգոսի աւրինադիր էին՝ ճանաչէին:

Յետ սորա տիրեաց Թովդա՝ որդի Փիղեայ Աքարեանց, որ էր ի ցեղէ Եփրեմի, եւ տիրեաց ամս քսան եւ երիս: Յետ սորա Յայիր Գաղաաղացի՝ յազգէ Մանասէի. եւ տիրեաց ամս քսան եւ երկուս: Եւ յետ սորա մեղաւ ժողովորդն. եւ մատնեցան Ամովնացոց ամս ժԸ. եւ աղաղակեցին առ Աստուած. եւ յարոյց նոցա իշխան գՅեփթայէ Գաղայաղացի յազգէ Մանասէի. եւ տիրեաց ամս վեց: Յետ սորա տիրեաց Եսեբովն՝ յազգէ Յուդայ ամս եթն: Յետ սորա տիրեաց Աղղովն, յազգէ Չաբուղովնի, ամս տասն: Յետ սորա տիրեաց Եբրովն, որդի Աղեղայ Ափրաթովնացի, յազգէ Եփրեմի՝ ամս ութ:

Յետ սորա մեղաւ ժողովորդն, եւ մատնեաց այղազգեաց ամս քառասուն: Եւ իբրեւ դարձան՝ յարոյց նոցա իշխան գՍամփսովն որդի Մանուէի, յազգէ Դանայ, որ մարտեաւ ընդ

այդագոյն. եւ տիրեաց ամս քսան: Յաւորս Սամփսովնի Դեղաղ՝ որ հիւսն Մաժան կոչի, եւ Երակղէս՝ որդի Չեսայ, ի յԱղկմենայ ծնեալ, եւ Երմես եռամեծ երեւեհն:

Յետ սորա տիրեաց Սամեգար ամս երեսուն: Յետ այսորիկ անիշխանութիւնն կալաւ, որպէս Ափրիկանոսն պատմէ, ամս քառասուն: Յետ սորա շեղի քահանայ դատեաց գժողովորդն ամս քսան. եւ տապանակն Աստուծոյ եղեւ առ այդ ազգիսն ամիսս եւթն: Յաւորս շեղեայ քահանայի Իդիոն հրկէզ եղեւ եւ քաջքն ի մատ կային:

/37b/ Յետ սորա Սամուէղ մարգարէ, որ ամ զՄաւուղ ի թագաւոր: Եւ յետ այսորիկ դարձոյց Սամուէղ գտապանակն յայդագոյնացն. եւ եղ ի տան Ամինադաբայ. եւ եկաց անդ ամս քսան: Եւ դատեաց զԻսրաէլ ամս քսան եւ երկուս: Եւ թագաւորեաց Մաւուղ ամս քառասուն. եւ էր նորա սպարապետ Աբեններ՝ որդի Ներեայ:

Յետ այսորիկ իբրեւ թագաւորեաց Դաւիթ, եհան գտապանակ կտակարանացն ի տան Ամինադաբայ. եւ ի հանելն՝ թիրեաց գնա եզնն. իբրեւ մատեաւ ուղղել գնա Ոգա, հարաւ անդէն եւ մեռաւ: Իբրեւ ետես Դաւիթ՝ զահի հարաւ. եւ եկաց անդ ամիսս երիս: Այս Սամուէղ ամ զԴաւիթ ի թագաւոր: Եւ առնին ի Յետուայ որդոյ Նաւեայ մինչեւ յառնույն Դաւիթ զթագաւորութիւնն, որ էր յազգէ Յուդայ, ազգք եւթն, ամք ՆՁԷ. եւ յԱդամայ ազգք երեսուն եւ չորս, ամք ՏՅԿԴ:

Յետ այսորիկ թագաւորեաց Դաւիթ ամս քառասուն եւ ամիսս վեց. ի Քեբրոն՝ ամս եւթն, ամիսս վեց. եւ յԵրուսաղէմ՝ ամս երեսուն եւ երիս: Ի սորա ատուրս էր քահանայապետ Աբիաթար՝ որդի Աբիմեղեքայ: Եւ ի միսմէ ցեղէն՝ Սաղովկ: Եւ մարգարէանային յաւորս Դաւիթի՝ Գաղ, Նաթան, եւ Ասափ. եւ էր սպարապետ Դաւիթի՝ Յովաբ որդի Սարուիեայ, քեռ Դաւիթի: Սա թուեաց զցեղսն Իսրաէլի. եւ էր թիւն, զոր թուեաց Յովաբ որդի Սարուիեայ զորդոցն Իսրաէլի, անձինք իբրեւ հազարիցս, եւ հարիւր հազար եւ որդիքն Յուդայ՝ ՆՀՈ: Բայց Ղեւի եւ Բենիամին ոչ թուեցան. եւ վասն թուելոյն նորա զԻսրաէլ, անկան յԻսրաէլէ երթանասուն հազար:

Յետ Դաւիթի թագաւորեաց Սողոմովն, որդի նորա, ամս քառասուն. եւ ի նորա ատուրս դարձեալ մարգարէանայր Նաթան եւ Աքիա Սեղովնացի. եւ քահանայապետ նորա էր Սաղովկ:

Յետ սորա թագաւորեաց Ռոբոլամ որդի իւր ամս եւթն եւ տասն. առ սովաւ բաժանեցաւ թագաւորութիւնն:

Եւ ի Սամարիա թագաւորեաց Յորոբոլամ ծառայ Սողոմովնի, յազգէ Եփրեմի՝ եւ մարգարէանայր առ Յորոբոլամաւ Աքիաս Սեղովնացի եւ Սամեա որդ ի շեղումայ:

Յետ սորա թագաւորեաց Աքիա որդի իւր՝ ամս վեց: Յետ սորա թագաւորեաց Ասսա՝ որդի նորա, ամս քառասուն եւ մի: Սորա ի ծերութեան ցաւեցին ոտք իւր. եւ մարգարէանայր յաւորս նորա Անանիա:

Յետ սորա թագաւորեաց Յովսափատ որդի իւր ամս քսան եւ հինգ: Ի սորա ատուրս մարգարէանայր Եղիաս, եւ Միքեէ՝ որդի Յեմբղեայ, եւ Աբդիու՝ որդի Անանիայ. եւ էր յաւորս Միքէի մարգարէ մի սուտ՝ անուն Սեղեկիա, որդի Քանանու:

Յետ սորա թագաւորեաց Յովրամ որդի իւր՝ ամս քսան. ի սորա ատուրս մարգարէանային Եղիա եւ Եղիսէնու:

Յետ սորա թագաւորեաց Ոքոզիա որդի իւր՝ ամ մի: Ի սորա ատուրս կերաւ ժողովորդն, ի Սամարիա, զորդիս իրեանց եւ զաղբ աղաւնեաց, ի ժամանակին իբրեւ թագաւորեալ էր Յովրամ ի Սամարիա. եւ յաւորս Ոքոզիայ մարգարէանայր Եղիսէնու եւ Աբադադովնէ:

Յետ սորա թագաւորեաց Գոթողիա, մայր Ոքոզիայ, ամս ութ: Սա կոտորեաց զթոռունս իւր, զի յազգէ էր Աքաաբու արքայի Իսրաէլի. բայց քոյրն Ոքոզիա եւ Յովսաբէ՝ կին Յովիդայեի քահանայապետի՝ գողացան զՅովսա որդի Ոքոզիայ. եւ ի նորա վերայ եղ Յովիդայէ զթագաւորութիւնն: Եւ մարգարէացաւ առ Գոթողիա՝ Եղիսէնու:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.